

Հ Ա Ի Ա Տ Ա Յ Ե Ա Լ...

Հաւատացեալ իմ հայրս ու մայրս էին,
 Ու մեծ հայրերս ու մեծ մայրերս ալ բոլոր,
 Հաւատացեալ կրօնքին մէջ Յիսուսին,
 Անով խոնարհ, անով հրպարս ու հրգօր:

Այդ սանդուխին ես վերջին ոտք, ա՛հ, ի՞նչպէս,
 Անկէ եկող անհուն շրմորհն ուրացայ,
 Ճանանչալոյս դարերն ի վար, յամբապէս
 Ինծի եկող աստուածային նախընծայ...

Առանց անոր տեղերի մէջ մինակ
 Ու կտրուած իմ անցեալէս կ'ապրէի,
 Սառած հոգւով, սառած լոյսին տակ երկնի...

Մինչդեռ հիմա, ես այն համբէն համարձակ
 Եւ մեղմամբայլ կը մօտենամ առ Աստուած,
 Ամէն քայլի նախնեացս հոգւովն ուժովցած...

1925

Վ.Ա.ՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

